

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԳՈՒԳԱՐՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021թթ.

ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

(ՀՀԶԾ)

Քննարկվել և հաստատվել է Գուգարք գյուղական
համայնքի ավագանու 23 դեկտեմբերի 2016թ. նիստի թիվ
22 որոշումով

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի ղեկավարի ողջունի խոսքը.....2
2. Համայնքի իրավիճակի նկարագրությունը.....3
- 2.1. Համայնքի ընդհանուր նկարագրությունը.....3
- 2.2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը
- 2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը
- 2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրությունը և ֆինանսական կանխատեսումները
- 2.5. Զարգացման խոչընդոտները և դժվարությունները
- 2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՀՄ) վերլուծություն

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Հարգելի գուգարքցիներ

Հպարտանալով մեր բնօրրանի փառապանծ անցյալով, ստեղծարար մարդկանց այսօրվանով, մենք համատեղ ուրվագծելու ենք մեր ապագան, որպեսզի հասնենք մեր երազածին, տեսնենք համայնքի փայլուն ապագան, պատկերացնենք մեր համայնքի տեսլականը: Այդ ճանապարհը երկար է, լի խոչընդոտներով, դժվարություններով: Այդ ճանապարհի մի մասն էլ հենց 2017-2021թթ. է: Ուստի Ձեր ակտիվ մասնակցությամբ, լսումների, խորհրդակցությունների արդյունքում մշակել ենք այս ծրագիրը, ներառելով համայնքում առկա խնդիրները, պրոբլեմները, խոչընդոտները, դրանց ծնող պատճառները: Պրոբլեմները հիմնականում նույնն են, ինչես ամբողջ հանրապետությունում, ֆինանսական միջոցների անբավարարություն, բնակչության սոցիալական ցածր մակարդակ, արտագաղթ, գործազրկություն, անբնակ տներ, բնակչության թվի նվազում: Այս բոլորին ավելանում է նեհամայնքային խնդիրներ, մասնավորապես՝ խոշոր գյուղական համայնքում արտադրական ձեռննաչկությունների բացակայություն, բնակելի ֆոնդ վատ վիճակ, մանկապարտեզի շենքի բացակայություն, դպրոցների ոչ համաչափ տարածքային տեղաբաշխում, անբարեկարգ փողոցներ, աղբահանություն, կոմունալ ծառայությունների և ինչու չէ գյուղատնտեսական ոլորտի զարգացման և արտադրանքի իրացման խնդիրներ:

Այս և այլ չթվարկած խնդիրների լուծման համար մշակել և հաստատել սույն ծրագիրը առաջիկա 5 տարիների համար: Ծրագրի իրականացումը հնարավորություն կընձեռնի մասնավորապես բարելավելու գուգարքցու սոցիալական վիճակը, նախադպրոցական տարիքի երեխաներին հաճախել հարմարավետ տիպային մանկապարտեզ, բարեկարգել ներհամայնքային ճանապարհները, մաքրել սելավատարները, օգնել գյուղատնտեսությամբ զբաղված մարդկանց, ուշադրության դարձնել դպրոցական, մարզական, մշակույթային առօրյային: Մեր պարտականությունների շրջանակում կատարել աղբահանություն, մաքրման և կոմունալ աշխատանքներ: Հիմնական խնդիրներից է մնում բնակֆոնդի պահպանումը, 2 բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգումը, մշակույթի տան տանիքի նորոգումը: Խնդիրները շատ են, միջոցները անբավարար: Մենք բնակչության հետ քննարկման, ավագանու ակտիվ մասնակցությամբ ներկայացնում են սույն հնգամյա զարգացման ծրագիրը, հուսով որ այն հիմնականում կլինի իրատեսական, նշված խնդիրները, պրոբլեմները լուծելու համար:

Համայնքի ղեկավար Ա. Աշուղյան

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղը հիմնադրվել է 1710թվին: Հիմնական գյուղաբնակների նախնիները այստեղ հաստատվել են Արցախից: Ռելեֆը լեռնային է շրջափակված Փամբակի լեռաշղթայով, տարծքից հյուսիսային մասով հոսում է Փամբակ գետը, կլիման բարեխառն է, ձմռանը երբեմն ցուրտ, ամռանը երբեմն շոգ: Տեղումները միջին չափի, սեզոնին հաճախակի կարկտահարություն, սելավներ: Հորդառատ անձրևներին հաջորդում է սելավատարի խցանումը, ավերից դուրս գալը, բանջարանոցների և այգիների տիղմապատումը և ավերվածությունները: Հեռավորությունը մայրաքաղաքից 130կմ է մարզկենտրոնին սահմանակից: Ծովի մակարդակից բարձրությունը 1350մ է, վարչական տարածքը 2092 հա, որից վարելահողեր 242 հա, խոտհարք 202 հա, արոտավայրերը 1078,6 հա, պտղատու այգիներ տնամեծներում 56 հա, այլ հողատեսքեր 164,3 հա: Սեփականաշնորհված է 370 հա, համայնքային սեփականություն 1317 հա: Սեփական եկամուտները կազմում է ընդամենը 20%: Գյուղը նախկին Գուգարքի շրջանի կենտրոնն է եղել: Ունի 1 ավագ և 1 հիմնական դպրոց, մանկապարտեզ, մշակույթի տուն, գրադարան, մարզադպրոց: Նախկին արտադրական ձեռնարկություններ, հատկապես կարի ֆաբրիկան չի գործում, չի պահպանվել հիմնական միջոցները: Հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է: Անասնապահությունը անեկամտաբեր է, նվազում է անասնազլիաքանակը, չի իրացվում կամ աննշան գներով է իրացվում միս, կաթնամթերքը: Համայնքի բնակչության թիվը 5500 մարդ է:

Փախստականների թիվ եզակի է, տատանվող, մեծ թիվ են կազմում սոցիալական խոցելի խմբերը:

Թոշակառուներ – 1023

Հաշմանդամներ – 232

Նպաստառուներ – 250


Երեխաներ (0-5 տարեկան) – 134

Դպրոցականներ (6-17 տարեկան) – 568

Աշխատունակ բնակչության թիվը կազմում է 3800 մարդ, վարձու աշխատանքով զբաղված է 385 մարդ: Զբաղվածության հաջորդ մասը հողագործության և անասնապահության ոլորտում է: Զբաղվածություն չունեցող, տնտեսապես ոչ ակտիվ մարդկանց թիվը 2920 է:

2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Տեղական ինքնակառավարումն իրականացվում է համայնաքապետարանի աշխատակազմի միջոցով: Չորրորդ անգամ համայնքի ղեկավար է ընտրվել Աշոտ Աշուղյանը և նորընտիր ավագանին իր 11 անդամներով, կիսով չափ նորցված անդամներով: Համայնքապետարանի աշխատակազմը ունի հետևյալ կառուցվածքը:



ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՄՊՈՐՏ

Համայնքում գործում է 2 դպրոց, թիվ 1`ավագ և թիվ 2` հիմնական դպրոցը: Ավագ դպրոցի վիճակը բավարար է, թիվ 2-ը հավաքովի կառուցված հետերկրաշարժային տարիներին, նոր կառուցված Կոտեջային թաղամասում խնդիրներ կան աշակերտների տեղափոխման հետ, ուսուցիչները տեղացիներ են, Վանաձորից 14-ը: Պակասել են աշակերտների թիվը դպրոցներում: Երկու հաստատություններն էլ ջեռուցվում են գազի վառարաններով: Համայնքի ցավոտ թիվ 1 խնդիրը մանկապարտեզի շենքի բացակայությունն է: Հիմնական շենքը քանդվել է 1988թ. երկրաշարժի ժամանակ, որոշ ժամանակ գործել է փայտաշեն կառույցում, վերջին տարիներին հանգրվանել է թիվ 2 դպրոցի մի մասնաշենքում, որը արդեն նշվել է կտրված է գյուղի հիմնական տարածքից: Հաճախում են 50 նախադպրոցական տարիքների երեխաներ, մինչդեռ նրանց թիվը կրկնակի ավելի են: Կահավորվածությունը և սարքավորումները տասնամյակների վաղեմություն ունեն:

Մշակույթի տունը տիպային շենքում է տեղավորված, կիսաքանդ է, վերանորոգման առաջնահերթ կարիք ունի տանիքը` մոտ 1250մ² տարածքով: Գործող խմբակները սահմանափակ է, չի ջեռուցվում: Ձմռանը տաքացվում են առանձին սենյակներ: Դահլիճը 300 տեղանոց է, շենքը անմխիթար վիճակում է, մշակույթային միջոցառումներ չեն իրականացվում: Նույն շենքում են տեղակայված գրադարանը, որն ունի 18200 կտոր գրականությամբ: Մակայն զգացվում է գրադարանի ծառայություններից օգտվողների թվի նվազում: Վերանորոգվել է մարզադպրոցը, սակայն տեղանքի խոնավության պատճառով փտել են հասակի տախտակները: Դահլիճը չի ջեռուցվում, ինչի պատճառով հնարավոր չէ լիարժեք մարզումներ անցկացնել: Գործում են մարզական խմբակներ, որտեղ մարզվում են 120 սաներ:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Բնակֆոնդը 165,5 հազար քառ. մետր է, որից առանձնատներինը 122,5 հազար քառ. մետր: Բազմաբնակարան շենքերը թվով 9-ն է, որից 1-ը չորրորդ կարգի վթարայնության, ենթակա ամրացման: Երկրաշարժից հետո կառուցվել է կոտեջային թաղամաս: Առաջնահերթ խնդիր է թիվ 9 և 10 բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգումը: Աղբատար մեքենա համայնքապետարանը չունի: Աղբահանությունը կատարվում է մրցույթային կարգով: Աղբը տեղափոխվում է Վանաձորի աղբավայր: Չնայած աղբահանությունը կատարվում է պարբերաբար, այնուամենայնիվ թափառող կենդանիների և քամու պատճառով պոլիէթիլենային տոպրակները և թեթև իրերը տարածքը ապականում են: Վատ վիճակում են բոլոր փողոցները, բացառությամբ մարզկենտրոնին կապող ճանապարհը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ

Վարչական տարածքը 2092 հա, որից վարելահող242 հա, 2012 հա խոտհարք: Բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է, մասնավորապես անասնաբուծությունը: Հաշվառված է 995 գլուխ խոշոր եղջերավոր, 460 գլուխ մանր եղջերավոր, 300 խոզեր: Նկատվում է գլխաքանակի անկում : Ճյուղը եկամտաբերություն չի ապահովում: Խնդիրներ կան մսամթերքի իրացման, հատկապես գնային գործոնով պայմանավորված: Ցածր է նաև կաթի մթերման գները: Անհրաժեշտություն է կաթի ընդունման, մշակման արտադրամասի, թեկուզ միայն ընդունման կետի կառուցումը, հագեցված սառնարաններով:

Վարելահողերը չեն մշակվում, հիմնականում հնձում են խոտհարքների խոտերը, մասնավոր կողմից հնամաշ տեխնիկայով: Տնամեծներում մշակվում է կատոֆիլ, բանջարեղեն, ինչպես նաև տնամերձ այգիները:

Ոռոգվող հողեր չկան, եղած ջրագծերը չեն գործում: Գյուղատնտեսությունը հիմնականում գոյատևում է վարկային միջոցներով, սակայն ցածր եկամտաբերությունը խոչընդոտում է ճյուղի զարգացմանը:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Համայնքի միակ առողջապահական հիմնարկը` <<Առողջության առաջնային պահպանման կենտրոն>> ՊՈԱԿ-ն է` 2 բժշկով, 10 կրտսեր անձնակազմով: Հիմնական բուժօգնությունը բնակչությանը ստանում է Վանաձորի բուժհիմնարկներում: Վատ է սոցիալական վիճակը: Աղքատության շեմին են բնակչության կեսից ավելին: Բարձր է գործազրկությունը: Վարձու աշխատանքով զբաղված են մոտ 400 մարդ: Նպաստների համակարգում ընդգրկված են 82 ընտանիքներ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խոշոր գյուղական համայնքը չունի արտադրական որևէ ձեռնարկություն: Նախկին կարի ֆաբրիկայից ոչինչ չի մնացել: Գյուղը պատմական մշակույթային արժեքներով հարուստ չէ, զբոսաշրջության զարգացման հեռանկարներ չկան:

Համայնքային սեփականություն հանդիսացող գույք ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ սահմանված

- Մշակույթի տուն -1 միավոր
- Համայնքապետարանի վարչական շենք -1 միավոր
- Ներհամայնքային փողոցներ ճանապարհներ – 24 միավոր
- Կամուրջներ – 1միավոր
- Հուշարձաններ – 3 միավոր
- Գերեզմանատուն -2 միավոր
- Մարզադպրոց -1 միավոր
- <<Նիվա>> ավտոմեքենա – 1 միավոր

**2.6 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ,
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ
(ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

1) Ուժեղ կողմերը

- Գյուղը սահմանակից է մարզկենտրոն Վանաձոր քաղաքին, ճանապարհները չեն փակվում, կապը մշտական է հանրապետության բնակավայրերի հետ, գտնվում է Երևան-Վրաստան ճանապարհի խաչմերուկում:
- Կլիման բարեխառն է, հարմար գյուղատնտեսության զարգացման համար: Արոտավայրերը, խոտհարքները նպաստավոր են անասնաբուծության զարգացման համար:
- Համայնքն ամբողջովին գազաֆիկացված է, ապահովված կապի և հեռուստատեսության բոլոր հնարավորություններով:
- Գործում են հիմնական և ավագ դպրոցները, մանկապարտեզը, մարզադպրոցը: Հետդպրոցական, բաժրագույն կրթությունը շարունակում են մարզկենտրոնում և մայրաքաղաքում:
- Մշակույթային միջոցառումներ՝ թատրոն, համերգ և այլ հիմնականում հաճախում են Վանաձոր քաղաքի մշակույթային օջախներ, ընդամենը մի քանի բոլակում: Գործում են առևտրի 5 օբյեկտներ և 1 զազալցակայան:
- Բարձր որակավորում ունեցող մասնագետների առկայություն:

2) Թույլ կողմերը

- Երկրաշարժից մնացած, առանց ամրացման շենքերը, առանձնատները
- Բազմաբնակարանային թիվ 9 և 10 շենքերի տանիքների անմխիթար վիճակը:
- Մշակույթի տան, հատկապես տանիքի անտանելի վիճակը: Վերջին 30 տարում ոչ մի նորոգում կամ վերակառուցում չի իրականացվել:
- Երկրաշարժից քանդված մանկապարտեզի փոխարեն մինչև օրս, հանրապետության մեծ գյուղական համայնքներից մեկը չունի մանկապարտեզի շենք: Մանկապարտեզը գոյատևում է թիվ 2 դպրոցի մի փայտաշեն մասնաշենքում:
 - Փողոցները անբարեկարգ են, ասֆալտապատված է միայն մարզկենտրոնից Գուգարք ձգող ճանապարհը:
 - Չկա աղբահանության սեփական համակարգ, աղբատար մեքենա:
 - Նվազում է համայնքի ազգաբնակչության թիվը հատկապես ցածր է մանուկների և երիտասարդների տեսակար կշիռը:
 - Սոցիալական ծանր վիճակ, զբաղվածություն ցածր մակարդակ:
 - Բնակչության աճող աղքատություն, սոցիալական ցածր մակարդակ, եկամուտների նվազում:

3) Հնարավորությունները

- Գյուղատնտեսության մթերքների արտադրության լայն հնարավորություններ, արտավաճեր, խոտհարքներ, մարդկային ռեսուրսներ
- Արտադրական ձեռնարկությունների գործարկում աշխատանքների ստեղծում:

4)Սպառնալիքները

- Համայնքի դեմոգրաֆիկ վիճակը, բնակչության թվաքանակի նվազում:
- Բնական սպառնալիքները՝ երաշտ, կարկուտ, սելավների ավերվածություններ:
- Սեյսմիկ գոտում գտնվող կառույցների՝ հիմնականում խարխուլ վիճակը:

2.3 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

Համայնքի տարածքում անցնող 4 տարում հանրապետական և մարզային խոշոր ծրագրեր չեն իրականացվել: Հրատապ միջոցառումների ծրագրով ասֆալտապատվել են 1,5 կմ երկարությամբ ճանապարհներ: Պետական բյուջեի միջոցներով վերանորոգվել են թիվ 7 և 8 շենքերի տանիքները: Ծրագիրը շարունակական է և անհրաժեշտ է թիվ 9 և 10 շենքերի տանիքների նորոգումը, որով տվյալ շենքերը կփրկվեն փլուզումից:

Շարունակական անհրաժեշտություն է նաև ճանապարհների, փողոցների վերանորոգումը, իսկ հանրապետական, մարզային ծրագրերի շրջանակում նաև առաջին կարևորություն ունեցող փողոցների ասֆալտապատում:

Միջհամայնքային համագործակցության ծրագրեր և միջոցառումներ չկան, առաջիկայում հատկապես կարևորվում է Վանաձոր քաղաքի հետ աղբավայրի և կեցադային թափոնների մշակման ծրագրերը, ինչ բավական ծախսատար է, կախված դոնոր կազմակերպությունների բարեհաճությունից:

Համայնքում տեղացի և արտասահմանյան բարերարների կողմից ծրագրեր չեն իրականացվել թե գրավչության թե շահութաբերության ակնկալիքից ելնելով: Մասնավոր կապիտալը նույնպես համայնքում իր գործը չի անում:

Համայնքային ծրագրերից հիմնականները հետևյալներն են.

- Մանկապարտեզի կառուցում
- Մշակույթի տան վերանորոգում
- Ճանապարհների վերանորոգում և որոշ հատվածների ասֆալտապատում
- Գիշերային լուսավորության կարգավորում, ինայողական լամպերի օգտագործմամբ

Ծրագրերի նպատակները ակնկալվող արդյունքները և դրանց ազդեցությունը համայնքի վրա ներկայացվում է առանձին ծրագրերի անձնագրերում և դրան կից նկարագրականով:

2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքի կարևորագույն ֆինանսական փաստաթղթերը՝ հնգամյա ծրագրերը, տարեկան բյուջեները կանխատեսելիս ցավոք Գուգարք համայնքի սեփական եկամուտների աճ նախատեսել դժվար է:

Որովհետև համայնքում արդյունաբերական ձեռնարկություններ չկան, նույնիսկ արտադրամասեր : Տեղական տուրքերի նվազում, հետ վերադարձվող հողակտորների, կամ դրանց սեփականատերերի բացակայության անեկամտաբերության պայմաններում հողի հարկի աճ կանխատեսելը նույնիսկ դժվար է: Գույքահարկի աճը հիմնականում ակնկալվում է տրանսպորտային միջոցներով:

Այնուամենայնիվ հաշվի առնելով վերոհիշյալը, պետք է ռեսուրսները օգտագործել ամբողջությամբ, մեր երազած տեսլականը իրականություն դարձնելու համար:

Կից աղյուսակներով ներկայացվում է համայնքի բյուջեի եկամուտները և ծախսերը հիմնական ուղղություններով 2017-2021թթ. համար: Իսկ առանձին տարիների հասանելի լրացուցիչ միջոցները կներգրավեն հաջորդող տարիների տարեկան բյուջեներում առանձին ծրագրերի տեսքով, որոնք կնպաստեն համայնքի զարգացմանը:

2.5 ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի զարգացման խոչընդոտները և դժվարությունները պայմանավորված չեն միայն համայնքային խնդիրներով, այլ պայմանավորված են պետական ծրագրերով, դրանց ազդեցություններով: Հետևաբար հիմնական խոչընդոտները և դժվարությունները կնվազեն հանրապետությունում տնտեսական իրավիճակի բարելավմանը, սոցիալական իրավիճակի կայունացմանը և այլ կայունացումներում պայմանավորված: Այնուամենայնիվ նշենք համայնքի զարգացման խոչընդոտներն ու դժվարությունները ըստ ուղղությունների:

- 1) 1.Գործարար միջավայրը չի բարելավվում, բիզնես ներկայացուցիչները չեն ցանկանում արտադրություն ստեղծել:
- 2) Համայնքի գույքի կառավարումը ևս դժվարությունների է հանդիպում: Բնակֆոնդը վատ վիճակում է, վերանորոգումների կարիք ունի: Մշակույթի տունը օրեցօր խարխլվում է, տանիքը շտապ փոխելու կարիք է զգում, իսկ տիպային շենքը ամբողջական վերանորոգման: Թիվ 9 և 10 շենքերի տանիքները նույնպես աղետալի վիճակում են: Անբարեկարգ փողոցները վերանորոգման, գիշերային լուսավորության կարիք ունեն:
- 3) Նախադպրոցական կրթության հիմնական խնդիրները մանկապարտեզի շենքի գույքի բացակայությունն է, համայնքի համար մեկ հրատապ խնդիրը:
- 4) Ակտիվ մարզական և մշակույթային կյանքի աշխուժացմանը խոչընդոտում են մարզադպրոցի ջեռուցման համակարգի բացակայությունը, հատակի տախտակների փտում խոնավությունից, իսկ

մշակութային կյանքի հիմնական խոչընդոտը մշակույթի տան անմխիթար վիճակն է, ջեռուցման համակարգի բացակայությունը:

- 5) Համայնքի բնակչությունը սոցիալապես անապահով վիճակում է: Անձնական տնտեսություններից ստացված եկամուտները չնչին են, աշխատատեղերը խիստ սահմանափակ, զբաղվածների թիվը ընդհանուր բնակչության 10%-ն է կազմում:
- 6) Ֆիզկուլտուրան և առողջ ապրելակերպը հիմնականում խրախուսվում է, անցկացվում են միջոցառումներ մարզադպրոցում, հանրակրթական 2 դպրոցներում:
- 7) Բնակարանային շինարարությունը հիմնականում դադարել է, համայնքում առկա է շատ չբնակեցվող տներ, բնակարաններ, որոնց ձեռքբերումը ավելի ձեռնտու է, քան նոր շինարարությունը:
- 8) Աղբահանությունը կատարում է Վանաձորի <<Սանմաքրում>> ձեռնարկությունը մրցույթային կարգով, համայնքը չունի աղբատար մեքենա: Կառուցապատումը, բարեկարգումը, կանաչապատումը, ինչպես նաև գերեզմանատների պահպանում իրականացվում է համայնքային բյուջեի սուղ միջոցներից, ինչը սահմանափակ է և չի բավարարում:
- 9) Հասարակական տրանսպորտը գործում է նորմալ, սակայն ճանապարհային ենթակառուցվածքները շահագործման և պահպանման համար ունեն լրացուցիչ միջոցների կարիք:
- 10) Պետության պաշտպանության աջակցման նպատակով, սերտորեն համագործակցում է Վանաձորի տարածքային զինկոմիսարիատի հետ, զինակոչի, զորահավաքային պլանների իրականացման գործում: Գյուղապետարանը հատուկ ուշադրություն է դարձնում սահմանահ զինվորների ընտանիքների նկատմամբ:
- 11) Համայնքը չունի սեյսմիկ քարտեզ, ինչը խնդիր է առաջացնում: Պարբերաբար հեղեղումների պատճառով տիղմոտ ջուրը դուրս է գալիս սելավատարներից ավերում առանձնատները, այգի, բանջարանոցները, ճանապարհները:
- 12) Հիմնական զբաղմունքը համայնքում գյուղատնտեսությունն է, ջրովի հողատարածքներ չկան, մշակվում է հիմնականում տնամերձ հողերը՝ ուղղությունները բանջարաբուծություն, այգեգործություն: Հացահատիկային կուլտուրաներ չեն մշակվում, կարտոֆիլը փոքր քանակով սեփական կարիքների համար: Բնակչության հիմնական զբաղմունքը անասնաբուծությունն է, ինչը նույնպես եկամտաբեր չէ, խնդիրներ կան կաթի, մսի իրացման ոլորտում: Խոտհարքներ տեղակայված են բարձր ռելեֆում, տեխնիկայի պակասը՝ հնձիչ, հակավորոդ և այլն բարձրացնում են կերային միավորի ինքնարժեքը, որն էլ իր ազդեցությունն է թողնում կաթի, մսի ինքնարժեքի վրա:

- 13) Համայնքում բնապահպանական խոշոր խնդիրներ չկան, բայց զգացնել է տալիս հատված անտառների ցավը, աղբահանությունը պարբերաբար կատարվում է, սակայն համայնքապետարանի միջոցները չեն բավարարում իդեալական վիճակի հասնելու համար:
- 14) Առայժմ զբոսաշրջիմներին հետաքրքրող ծրագրեր դժվար է իրականացնել: Սակայն առաջիկայում Վանաձորում նախատեսվող զբոսաշրջությունը կարող է իր մեջ ներքաշել Գուգարք համայնքին, ինչը կարող է միջհամայնքային զարգացման փայլուն օրինակ լինել:
- 15) Ցավոք համայնքում երիտասարդների առօրյան հագեցված անցկացնելու պայմաններ չկան, հիմնականում մշակույթի տան անմխիթար վիճակով պայմանավորված: Հիմնականում անցկացվում են մարզական միջոցառումներ:
- 16) Ցածր է ծնելիության մակարդակը, պայմանավորված համայնքից երիտասարդների տեղաշարժի՝ արտահոսման, ինչպես նաև հանրապետության այլ վայրեր: Իր բացասական ազդեցությունն է թողնում նաև սոցիալական վատ վիճակը, ինչի պայմաններում բազմազավակության մասին խոսելն ավելորդ է:
- 17) Համայնքում գործող միակ առողջապահական հիմնարկը՝ Առողջապահության առաջնային կենտրոնն է՝ 2 բժիշկներով և 10 կրտսեր անձնակազմով: Այս կենտրոնում ծառայությունները անվճար են, սակայն հետագա բուժումների համար բնակչությունը դժվարությունների է հանդիպում, միջոցների պակասության պատճառով լիարժեք բուժում չեն կարողանում ստանալ:
- 18) Ցավոք համայնքը աշխատատեղերով հարուստ չէ, որպեսզի հաշմանդամների ներգրավեն աշխատանքում: Նրանք ներգրավված չեն նաև մարզական, մշակութային, ինչպես նաև հասարակական կյանքում:
- 19) Համայնքի բնակչությունը հիմնականում հայեր են, սակայն այլ ազգերի եզակի ներկայացուցիչները այսպես ասած մերված են տեղաբնակների հետ, հավասար իրավունքներով, միմյանց միջև հաղորդակցման խնդիրներ չկան:
- 20) Համայնքում իրականացվող ծրագրերի ֆինանսավորողների թվում ցավոք բարեգործներ չկան, համայնքում պատկառելի կարողությունների տիրապետող անձիք չկան, իսկ դրսի բարեգործները ցավոք չեն նկատում: Առաջիկա 5 տարիներին համայնքապետարանի աշխատակազմը կաշխատի այլ ուղղությամբ, լրացուցիչ միջոցներ ներգրավելու, ինչպես նաև թվարկած խնդիրներից հիմնական, առաջնահերթերը կներգրավեն հնգամյա զարգացման ծրագրերում:

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

3.1 Համայնքի զարգացման տեսլական Գուգարք համայնքի հնգամյա զարգացման ծրագրում արդեն նշվել են համայնքի անցյալին, ներկային վերաբերվող ցուցանիշները: Մինչդեռ կանխատեսումները զուսպ են, հուսով դրանք կլինեն իրատեսական, իսկ հնարավորությունների նոր բացահայտումները գուցե անհնարինի կայացմանը:

Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները առաջիկա 5 տարիների համար.

-Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը մոտ 400 է, կամ համայնքի ընտանիքների ընդհանուր թվի 25%-ը:

-Համայնքի սեփական եկամուտները կաճեն տարեկան 5%-ի սահմաններում:

-Համայնքի բնակչության թվակազմի դրական փոփոխություն չի նկատվում: Վերոնշյալ ցուցանիշների ինչպես նաև այլ ցուցանիշների բարելավմանն է միտված համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը: Սոցիալական վիճակի մակարդակի բարձրացումը զբաղվածների թվաքանակի աճը, աշխատատեղերի ստեղծման նպաստելը, համայնքում առաջնահերթ մանկապարտեզի կառուցումը, ճանապարհների վերանորոգումը, գիշերային լուսավորության նոր համակարգի ստեղծումը, բազմաբնակարանային շենքերի տանիքների նորոգումը, մշակույթի տան վերակառուցումը և այլ ծրագրեր կնպաստեն գուգարքցու կյանքի որակի բարձրացմանը, տեսլականի իրականացմանը:

**ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄՈՒՔԵՐԸ
ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

(հազ. դրամներով)

Հ/Հ	ԵԿԱՄՏԻ ՏԵՍԱԿԸ	2015թ. փաստացի	2016թ. կանխատեսում	2017թ. կանխատեսում	2018թ. կանխատեսում	2019թ. կանխատեսում	2020թ. կանխատեսում	2021թ. կանխատեսում
1	Եկամուտներ՝ ընդամենը	139943,6	141552,2	148268	155160	163355	167281	179766
	Հարկային եկամուտներ ընդամենը	13615,7	14200	15402,3	15666	16045	16790	17480
1.1	Հողի հարկ	3089,9	3120	3741,9	3780	3850	4105	4280
1.2	Գույքահարկ	10196,8	10820	11390,4	11596	11890	12360	12850
1.3	Տեղական տուրք	329	260	270	290	305	325	350
2	Այլ եկամուտներ	3721,5	4385	3419	3840	3985	4135	4270
2.1	Գույքի վարձակալություն	611,2	650	600	690	730	760	810
2.2	Հողի վարձակալություն	1539,5	1230	1199	1250	1280	1310	1350
2.3	Տեղական վճար	1570,8	1800	900	1120	1170	1230	1260
2.4	Օրենքով նախատեսված այլ եկամուտ.	742	705	720	780	805	835	850
3	Պաշտոնական տրանսֆերտներ	121864,4	122967,2	129446,7	135650	143325	150491	158016
3.1	Դոտացիա (ֆինանս. համահարթ.)	114874,8	122487,4	129446,7	135650	143325	150491	158016
3.2	Սուբվենցիա (նպատակ. ֆինանսավորում)	6989,6	479,8	-	-	-	-	-
	Տարեսկզբի ազատ մնացորդ	6069,8	6070,1	6000				

ԳՈՒԳԱՐՔՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԸ - ԸՍՏ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ

	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	2015թ. փաստացի			ԿԱՆԽԱՏԵՄԵԼԻ				
		Ընդամենը	Այդ թվում		2017	2018	2019	2020	2021
			Վարչական	Ֆոնդային					
	Ծախսատեսակները ըստ նշանակ.								
2100	Ընդհանուր բնույթի հանրային ծառ.	52837,3	45720,5	7116,8	57064,0	59800	62850	66050	69300
2400	Տնտեսական հարաբերություններ	16949,3	2567,0	14382,3	1800,0	1890	1985	2083	2188
2451	Ճանապարհային տնտեսություն	18161,5	2567,0	15594,5	1800,0	1890	1985	2083	2188
2500	Շրջակա միջավայրի բաեկարգում	14426,0	10155,0	4271,0	12200,0	12810	13450	14123	14829
2511	Աղբահանություն	5810,0	5160,0	650	5200,0	5460	5733	6020	6320
2521	Կեղտաջրեր, սելավատարներ	8616,0	4995,0	3621,0	7000,0	7350	7717	8103	8509
2600	Բնակ. շին. և կոմ. ծառայություններ	400,0	400,0	-	900,0	940	970	995	1040
2800	Հանգիստ մշակույթ	14428,3	134237	1004,6	14730,0	15319	15932	16569	17232
2820	Մշակույթային ծառայություն	13078,7	13078,7	-	14460,0	14573	15302	16068	16871
2821	Գրադարան	4644,8	46444,8	-	5050,0	5302	5567	5846	6138
2823	Մաշակույթի տուն	8053,9	8053,9	-	5050,0	5302	5567	5846	6138
2900	Կրթություն	34376,7	34376,7	-	38100,0	39624	41209	43270	4500
2910	Մանկապարտեզ նախակրթական	16088,0	16088,0	-	38100,0	39624	41209	43270	45000
2951	Արտադպրոցական սպորտ դպրոց	13628,9	13628,9	-	14870,0	15613	16394	17213	18075
2940	Բարձրագույն կրթություն	4439,8	4439,8	-	7200,0	7180	7142	7501	7441
3000	Սոցիալական պաշտպանություն	6860,0	6860,0	-	7600,0	7980	8380	8798	9238

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

« ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ »

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Մանկապարտեզը գործում է թիվ 2 դպրոցի մի մասնաշենքում, չունի անհրաժեշտ կահավորում, խոհանոց, ննջարանային պարագաներ, կտրված է գյուղի հիմնական տարածքից: 5500 բնակիչ ունեցող համայնքում մանկապարտեզ է հաճախում 50 երեխա, մինչդեռ ցանկացողների և կարիք ունեցողների թիվը կրկնակի, եռակի անգամ ավելի է:						
Ծրագրի անմիջական նպատակ	Մանկապարտեզ հաճախողների թվի ավելացում, այն կկազմի						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Կիսբանի նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը	50	60	70	80	90	100	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Ազդեցությունը համայնքի կայուն զարգացման վրա, աճի տեմպերը տոկոսներով						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Կբարելավվի հաճախող սաների դաստիարակչական կրթական, առողջական մակարդակը, սննդի, հիգիենայի հանգստի նոր պայմաններ կգործեն, շենքը կջեռուցվի ընդհանուր համակարգով երեխաների ծնողները կզբաղվեն աշխատանքով:	0	5	10	15	20	25
	2. Երեխաների ծնողները ազատվելով խնամքից ներգրավվածությունը տնտեսության այլ ոլորտ.						
Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
	2016	2017	2018	2019	2020	2021	
Ազատվելով երեխաների խնամքից խնդիրներից ծնեղները կփնտրեն աշխատանք, նպաստելով ընտանեկան բյուջեի ավելացմանը, սոցիալական վիճակի բարելավմանը	0	10	20	30	40	50	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.Ծրագրի իրականացման համար հանրային քննարկումների կազմակերպում 1.2.Հարցի վերաբերյալ դիմում մարզպետարան, ՀՀ կառավարություն						

	<p>1.3 Մանկապարտեզի կառուցման համապատասխան փաստաթղթերի կազմում, ծրագրի նախագիծ, նախահաշվի կազմում</p> <p>1.4 Հողի հատկացում, շինարարության թույլտվության տրամադրում</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1. Մանկապարտեզի շենքի կառուցում</p> <p>2.2. Շենքի հարակից տարածքի բարեկարգում, խաղահրապարակի կառուցում, ծառապատում</p> <p>2.3 Հիգենայի, սննդի, խաղերի, հանգստի պարագաների ձեռքբերում, մանկապարտեզի կահավորում</p>
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝ 10 մլն դրամ</p> <p>Կապիտալ ծախսեր՝ 90 մլն դրամ</p> <p>Ընդհանուր բյուջեն՝ 100 մլն դրամ</p>
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ծրագրով շահագործված անձանց, հասարակական, տեղական և արտասահման դոնոր կազմակերպությունների, բարերարների ներգրավվածությունը կառույցի, կահավորման, բարեկարգման և այլ աշխատանքներում, իսկ ֆինանսավորման հիմնական աղբյուրը ՀՀ պետբյուջեն է: Համայնքապետարանը նույնպես կունենա իր ներդրման մասնաբաժինը:
Ծրագրի հիմնական ռիսկերը	Մանկապարտեզի կառուցման ֆինանսական միջոցների հայթայթումը
Ծրագրի հիմնական շահառուները	Գուգարք համայնքի բնակիչներ
Ծրագրի սկիզբ և ավարտ	
Ծրագրի համառոտ նկարագրություն	Հանրապետության մեծ գյուղական համայնքներից, նախկին շրջկենտրոն՝ Գուգարքի մանկապարտեզի շենքը քանդվել է 1988թ. Երկրաշարժին, այնուհետև գոյատևել է փայտային կառույցում, հիմա թիվ 2 դպրոցի մի մասնաշենքում, զրկված բոլոր հարմարություններից, հաճախող երեխաների թիվը մի քանի հարյուրից կրճատվել է հասնելով 50-ի, գործող մանկապարտեզը կտրված է գյուղի հիմնական տարածքից, չունի հիգենայի, հանգստի, սնունդ ընդունելու նորմալ պայմաններ:

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

« Բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգում (թիվ 9,10) »

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Թիվ 90և 10 շենքերի տանքները երկրաշարժից հետո խարխուլվել են, անձրևաջրերը թափվում են տները: Քանդման վտանգի տակ են 70 բնակարաններ:						
Ծրագրի անմիջական նպատակ	Կառավարել համայնքի գույքը, փրկել այն փչացումից, երաշխավորել համայնքի հեռահար նպատակի (տեխնականի իրականացմանը, կայուն զարգացմանը)						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	2 շենքերը քանդվելուց փրկելու համար անհրաժեշտ է նորոգել շենքերի տանիքները մ ²	2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Նպաստել շահառուների սոցիալական վիճակի բարձրացումը						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	Շենքերի բնակիչները անձրևաջրերից պաշտպանվելու բնակարանները վերանորոգելու և այլ ծախսերի գումարները կուղղեն սոցիալական այլ հարցեր լուծելու	2016	2017	2018	2019	2020	2021
	2. Խնայել համայնքային բյուջեի ծախսերը ամենամյա վերանորոգում կատարելու						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
Ձևային և անձրևաջրերից բնակիչներին փրկելու համար համայնքի բյուջեից ծախսվում են որոշակի գումարներ ազբոջիֆերները փոխելու, ջրհորդանները կարգի բերելու համար: Կինայվեն այդ միջոցները:	2016	2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1.Քննարկումներ հասարակության ավագանու աշխատակազմի մասնակցությամբ</p> <p>1.2.Միջոցների հայթայթման համար դիմել ՀՀ կառավարություն, Լոռու մարզպետարան հրատապ ծրագրերի շրջանակներում ծրագիրն իրականացնելու, բարերաներին, դոնոր կազմակերպություններին ֆինանսական ներդրումների խնդրանքով</p> <p>1.3 Ծրագրի նախագիծ, նախահաշվի կազմումը</p> <p>1.4 Աշխատանքների թույլտվության տրամադրում</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1. թիվ 9 և 10 շենքերի հին տանիքների ապամոնտաժում</p> <p>2.2.Փտած փատյա կոնստրուկցիաների փոխարինում</p>						

	<p>2.3.Ջրհորդանների կառուցում</p> <p>2.4.Ազբոշիֆերների փոխարինում մետաղական ծածկով</p>
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝ 3 մլն դրամ</p> <p>Կապիտալ ծախսեր՝ 15 մլն դրամ</p> <p>Ընդհանուր բյուջեն՝ 15 մլն. դրամ</p>
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ծրագրի իրականացման համար կարող են օգտագործվել ՀՀ պետբյուջեից տրամադրվող նպատակային ներդրումները, մարզպետարանի հրատապ ծրագրերի ֆինանսավորման անհատ բարերարներ, տեղական միջազգային դոնոր կազմակերպություններ, համայնքային ներդրումներ
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինանսական միջոցների հայթայթումը
Ծրագրի հիմնական շահառուները	Թիվ 9 շենքի 50 բնակարանի 132 բնակարանների են և թիվ 10 շենքի 20 բնակարանների 52 բնակիչներն են
Ծրագրի սկիզբ և ավարտ	2018թ. Հունվարի 1-ից 2018թ. դեկտեմբերի 31-ը
Ծրագրի համառոտ նկարագրություն	Թիվ 9 և թիվ 10 շենքը շահագործվել են 1985թ. 1988թ երկրաշարժի ժամանակ թուլացել, անմխիթար վիճակում են հայտնվել: Իսկ առավել ցածր են տանիքները, ազբոշիֆերները ջրադրվել են հեռացել են իրարից, պողպատյա ջրհորդանները ժանգոտվել, փտել են, ինչը պատճառ է դարձել ջրի անարգել հոսելու, թուլացնելով պատերը, թրջելու առաստաղները, հատկապես 5-րդ հարկի բնակարանների: Առաջնահերթ խնդիր է 2 շենքերի տանիքների նորոգումը, ինչը կազմում է 1200մ ² , որից 800մ ² թիվ 9 շենքի տարածքը և 400 մ ² թիվ 10 շենքի տարածք: Ընդհանուր արժեքը կազմում է 10,8 մլն. դրամ

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

«ԳՈՒԳԱՐՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՏԱՆԻՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ»

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Մշակույթի տունը կառուցված է 1980թ. Տիպային նախագծով, 1988թ. Երկրաշարժին կառույցը թուլացել է, խարխվել: Տասնյակ տարիներ չի վերանորոգվել: Իսկ հիմնական խնդիրը տանիքն է 1350մ ² տարածքով: Քամու, ձյան, անձրևի պատճառով ամբողջովին շարքից դուրս է եկել: Անձրևաջրերը և ձնհալի ջրերը անարգել թափանցում են ներքև, խարխլուով պատերը, կոնստրուկցիաները, հատակը: Առաջնային խնդիր է մշակույթի տան տանիքի հիմնանորոգում, շենքը քանդվելուց փրկելու, իսկ ապագայում ամբողջ կառույցը հիմնանորոգելուց հետո, կամ համայնքային հնարավորությունների դեպքում որոշ տարածքները օգտագործելու համար:						
Ծրագրի անմիջական նպատակ	Մշակույթի տան շենքում մշակույթային միջոցառումների անցկացում, գրադարանի անխափան աշխատանք						
	Ցուցանիշներ Եկամտի աճ(%) Հիմնանորոգել մշակույթի տան տանիքը, համապատասխան ջեռուցման համակարգով	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
0	-	1350	-	-	-		
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Մշակույթի տունը վերադարձնել բնականոն հուն, ծառայեցնելով իր նպատակին						
	Ցուցանիշներ՝ Մշակույթի տան մեծ դահլիճը, գրադարանի տարածքը, խմբակների պարապունքների, վարչական և այլ տարածքներ փրկել ավերվածությունից և վերադարձնել բնականոն հուն: Օգտագործվում տարածքների աճը տոկոսներով:	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	20	20	50	60	70	80	
	2. Գործող երաժշտական, պարային, խմբակների բնականոն գործունեությունը						
Ցուցանիշներ՝ Գործող խմբակների ավելացում, նրանց գործունեության բարելավում	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
	2016	2017	2018	2019	2020	2021	
4	4	5	6	6	7		

Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1. Անցկացնել հանրային քննարկումներ, լսումներ</p> <p>1.2. Փնտրել բարերարներ, դոնորներ, ներդրողներ</p> <p>1.3. Պետական բյուջեից նպատակային ներդրումներ ստանալու խնդրով դիմել մարզպետարան, ՀՀ կառավարություն</p> <p>1.4. Ձեռնարկել նախագիծ, նախահաշվի կազմումը</p> <p>1.5. Մրցույթային կարգով կատարել տանիքի նորոգում</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1. Վերանայել մշակույթի տան, գրադարանի բյուջեները, գործող խմբակները ավելացնելու, կադրերի, գործիքների ձեռք բերման համար</p> <p>2.2. Ավելացնել մշակույթային միջոցառումների ցանկը, հնարավորություն ստեղծել հյուրախաղերի անցկացման համար</p>
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝ 3մլն դրամ</p> <p>Կապիտալ ծախսեր՝ 19մլն դրամ</p> <p>Ընդհանուր բյուջեն՝ 22մլն դրամ՝</p>
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	<p>Ծրագրի իրականացման հիմնական աղբյուր կարող է ծառայել Պետբյուջեից հատկացվող նպատակային դրամաշնորհները, կամ մարզային հրատապ ծրագրերի հաշվին կատարվող ներդրումները:</p> <p>Առաջիկայում համայնքի ավագանին, աշխատակազմը կփնտրի դոնորների, տեղական, միջազգային, ինչպես նաև բարերաների ծրագիրը շարունակական դարձնելու, ներքին աշխատանքներ կատարելու համար</p>
Ծրագրի հիմնական ռիսկերը	<p>Ծրագրի իրականացման ձգձգումը լի է վտանգներով, շենքին սպասվում է փլուզման վտանգ, ուստի փրկության միակ ուղին ֆինանսական միջոցների հայթայթումն է և աշխատանքների կատարումը</p>
Ծրագրի հիմնական շահառուները	Գուգարք համայնքի բնակիչներ
Ծրագրի սկիզբ և ավարտ	
Ծրագրի համառոտ նկարագրություն	<p>Մշակույթային կյանքը համայնքում համարյան չի նշմարվում: 300տեղանոց դահլիճը անգործության է մատնված, անձրևաջրերից, եղած գույքը փչանում է, գրադարանի 18200 կտոր գրական ֆոնդը փչանում, խմբակային պարապունքներ, անմխիթար, չջեռուցվող սենյակներում հնարավոր չէ: Շենքի տանիքի նորոգումը առաջնահերթ խնդիր է համայնքի համար:</p>

Մ Ո Ն Ի Թ Ո Ր Ի Ն Գ Ի Ա Ն Ա Ն Ա Գ Ի Ր

Տրամաբանական մոդելի բաղադրիչ	Ցուցանիշի ելակետային արժեք (2016)	Ցուցանիշի թիրախային արժեք (2017)	Ցուցանիշի փաստացի արժեք (2017)	Ցուցանիշի կատարողական (2017)	Տվյալների հավաքագրման պարբերականությունը		Ցուցանիշի ստացման աղբյուր	Ցուցանիշի ստացման մեթոդ
					Կիսամյակային	Տարեկան		
Համայնքի կայուն զարգացում								
Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով)	25%	22%	0	0		X	համայնքապետարաններ	Փաստաթղթային ուսումնասիրություն/հարցազրույց
Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, արտահայտված տոկոսով	1%	2%				X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով	0.6%	0.9%				X	<< Ոստիկանություն	Հարցում
1. Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում								
Համայնքում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների թիվը (անհատ ձեռնարկատերեր և ձեռնարկություններ)	5Ա/Ձ	5Ա/Ձ				X	ՊԵԿ տարածքային բաժին	Հարցում
Ոչ գյուղատնտեսական բնագավառում ֆորմալ զբաղվածության աճ	0%	1%				X	ՊԵԿ տարածքային բաժին/ԱՎԾ	Հարցում
2. Համայնքի գույի և դրամական միջոցների կառավարում								
Գույքի հետ գործարքների համապատասխանությունը «Գույքի կառավարման ծրագրին»	100%	100%				X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
3. Նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակություն								
Առանձնացված նախադպրոցական հաստատություն (այն համայնքներում, որտեղ առանձին նախակրթարան չկա)						X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն

Նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվաքանակի հարաբերությունը համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով)	25%	25%				X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
Ծնողների բավարարվածությունը նախադպրոցական կրթությունից	40	40					Նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների ծնողներ	Հարցում կամ խմբային հարցազրույց/ֆոկուս խումբ
Արտադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվի հարաբերությունը համայնքի դպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով	5%	6%				X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
Ծնողների բավարարվածությունը արտադպրոցական կրթությունից	60%	60%			X		Արտադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների ծնողներ	Հարցում կամ խմբային հարցազրույց/ֆոկուս խումբ
4. Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ								
Համայնքապետարանի կազմակերպված մշակութային միջոցառումների թիվ	6	7				X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
Համայնքում գործող մշակութային խմբակների թիվ	3	5				X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
Մշակութային խմբակներում ընդգրկված երեխաների ու պատանիների թվի հարաբերությունը համայնքի երեխաների ու պատանիների թվին՝ արտահայտված տոկոսով	10%	12%				X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
Ծնողների բավարարվածությունը մշակութային խմբակներից	40%	40%			X		Արտադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների ծնողներ	Հարցում կամ խմբային հարցազրույց/ֆոկուս խումբ
Համայնքապետարանի միջոցներով կազմակերպված երեխաների ու պատանիների այցելություններ համայնքից դուրս մշակութային օջախներ	0	0				X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն

Համայնքապետարանի միջոցներով համայնքում կազմակերպված մարզական միջոցառումների թիվ	1	3				X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
Համայնքային գրադարանի (ներառյալ էլեկտրոնային գրադարանի) առկայություն	այո	այո				X	Համայնքապետարան	Դիտարկում
Գրադարանից օգտվողների թվի տարեկան աճ նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով	5%	8%				X	Գրադարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
5. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն								
Սոցիալական ծրագրի առկայություն	0	0				X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը ծրագրից		0			X		Շահառուների ընտրանք	Հարցում կամ խմբային հարցազրույց/ֆոկլուս խումբ
6. Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խթանումը								
Համայնքապետարանի օժանդակությամբ համայնքում գործող մարզական խմբակների թիվ	4	6				X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
Մարզական խմբակներում ընդգրկված երեխաների ու պատանիների թվի հարավերությունը համայնքի երեխաների ու պատանիների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով						X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
Ծնողների բավարարվածությունը մարզական խմբակներից	23%	25%			X		Մարզական խմբակներ հաճախող երեխաների ու պատանիների ծնողներ	Հարցում կամ խմբային հարցազրույց/ֆոկլուս խումբ
7. Համայնքում բնակարանային շինարարության խթանումը								
Համայնքում կառուցված բնակելի մակերես						X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն

Համայնքապետարանում հաշվառված բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թվի հարաբերությունը համայնքի տնային տնտեսությունների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով	0%	10%				X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
8. Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը								
Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն	0	0				X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
Համայնքում գլխավոր հատակագծին համապատասխան տրված շինարարական թույլտվությունների թվի հարաբերությունը տրված շինարարական թույլտվությունների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով						X	Համայնքապետարան	Փաստացի ուսումնասիրություն
Համայնքում քաղաքաշինական կանոնադրության առկայություն	0					X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
Կառուցապատման թույլատրության մեջ նշված ժամկետների պահպանմամբ իրականացված շինարարությունների թվի հարաբերությունը համայնքում իրականացված շինարարությունների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով	100%					X	Համայնքապետարան	Փաստացի ուսումնասիրություն
Համատիրությունների կողմից սպասարկվող բնակելի մակերեսի հարաբերությունը համայնքի կողմից սպասարկվող բնակելի մակերեսին, արտահայտված տոկոսով	25%					X	Համայնքապետարան/համատիրություններ	Փաստացի ուսումնասիրություն
Համայնքի բնակիչների բավարարվածությունը ջրամատակարարումից և ջրահեռացումից	60%	80%	0	0	X		Համայնքի բնակիչներ	Հարցում կամ խմբային հարցազրույց/ֆոկուս խումբ
Համայնքի բնակիչների բավարարվածությունը ոռոգման ջրի մատակարարումից	0%	0%						

Համայնքի բնակիչների բավարարվածությունն աղբահանությունից և սանիտարական մաքրումից	90%	100%			X		Համայնքի բնակիչներ	Հարցում
Համայնքի կանաչ տարածքների տարեկան աճ, արտահայտված տոկոսով	2%	5%				X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
Գերեզմանատների համապատասխանությունը հատակագծին (այսինքն՝ գերեզմանատան հաստատված տարածքից դուրս գերեզմանատեղի չի հատկացվում)	100%	100%				X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
9. Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում								
Համայնքի բնակիչների բավարարվածությունը համայնքը սպասարկող հասարակական տրանսպորտի աշխատանքներից	80%	90%			X		Համայնքի բնակիչներ	Հարցում
Համայնքային ենթակայության ճանապարհների տեղադրված ճանապարհային նշանների թվի հարաբերությունն անհրաժեշտ ճանապարհային նշաններին, արտահայտված տոկոսով	80%	90%				X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
Համայնքում կահավորված ավտոբուսային կանգառների հարաբերությունը ավտոբուսային կանգառների ընդհանուր թվին	100%	100%				X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
Համայնքը սպասարկող հասարակական տրանսպորտի պարկում 5 և ավելի տարի հնություն ունեցող մեքենաների հարաբերությունն ավտոպարկի մեքենաների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով	100%	100%				X	Համայնքապետարան/ուղևորափոխադրումներ իրականացնող ընկերություն(ներ)	Փաստաթղթային ուսումնասիրություն/ հարցում
Համայնքի ենթակայության տակ գտնվող ճանապարհների ամեն տարի ասֆալտապատած հատվածի երկարության հարաբերությունը համայնքի ենթակայության տակ գտնվող ճանապարհների երկարությանը, արտահայտված տոկոսով	2%	5%				X	Համայնքապետարան/շինարարություն իրականացնող ընկերություն(ներ)	Փաստաթղթային ուսումնասիրություն/ հարցում

10. Աջակցություն պետական պաշտպանության իրականացմանը								
Համայնքում բնակվող զինապարտ քաղաքացիների գրանցամատյանի վարում	առկա	առկա				X	Համայնքապետարան/տարածքային զինվորական կոմիսարիատներ	Փաստաթղթային ուսումնասիրություն
11. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացում								
Համայնքում ապաստարանի կամ թաքստոցի առկայություն	առկա	առկա				X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
Համայնքում քաղաքացիական պաշտպանության շտաբի առկայություն	առկա	առկա				X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության բնագավառում համայնքի ՔՊ մարմինների հմտությունների կատարելագործման նպատակով վարժանքներ	այո	այո				X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
Կամավորական փրկարարական միավորումների ստեղծում, ուսուցման կազմակերպում		0	0			X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
12. Գյուղական բնակավայր ընդգրկող համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանումը								
Համայնքի՝ գյուղատնտեսությամբ զբաղվող բնակիչների եկամտի տարեկան աճ		0%	2%			X	Գյուղատնտեսությամբ զբաղվող բնակիչներ	Հարցում կամ խմբային հարցազրույց/ֆոկլորա խումբ
Բերքատվության տարեկան աճ		0%	10%			X	Համայնքապետարան	Հարցում
Համայնքի մշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի հարաբերությունը ընդհանուր գյուղատնտեսական նշանակության հողերին արտահայտված տոկոսով						X	Համայնքապետարան/ԶՕԸ	Հարցում
13. Համայնքում շրջակա միջավայրի պահպանություն								

Համայնքում էներգախնայող լամպերով լուսավորվող տարածքի հարաբերությունը ընդհանուր լուսավորվող տարածքին, արտահայտված տոկոսով	0	0				X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
Համայնքի կազմակերպած ծառատունկի ժամանակ տնկված ծառերի կաչողականություն, արտահայտված տոկոսով	0	0				X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
Համայնքի մաքրման շաբաթօրյակներ	այո	այո				X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
14. Զբոսաշրջային հեռանկարներ ունեցող համայնքներում՝ զբոսաշրջության զարգացման խթանում								
Զբոսաշրջությունից եկամուտ ստացող տնային տնտեսությունների աճ նախորդ տարվա համեմատ	0	0				X	Զբոսաշրջությունից եկամուտ ստացող տնային տնտեսություններ	Իմբային հարցագրույց/ֆոկուս խումբ
Համայնք այցելած զբոսաշրջիկների թվաքանակի աճ նախորդ տարվա համեմատությամբ	0	0				X	Հյուրանոցներ, տուրիստական գործակալություններ, համայնքապետարան	Իմբային հարցագրույց/ֆոկուս խումբ
15. Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում								
Համայնքի միջոցներով կազմակերպված ծրագրերի և միջոցառումների քանակ	0	0				X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
16. Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանում								
Համայնքում ծնելիության աճ նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով	0.9%	1.5%				X	ՔԿԱԳ բաժին	Հարցում
3 և ավելի երեխաներ ունեցող ընտանիքների աճ նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով						X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
17. Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացում, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծում								

Ոչ վարակիչ հիվանդությունների հիվանդացության նվազում նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսներով	0	0				X	Համայնքապետարան, համայնքապետարանի ենթակայության բժշկական հաստատություններ	Փաստաթղթային ուսումնասիրություն կամ հարցում
Համայնքային ենթակայության բուժական հիմնարկի կողմից այլ բուժական հիմնարկներ ուղղորդված այցելուների քանակի նվազում նախորդ տարվա համեմատ	0	0				X	Բժշկական հաստատություններ	Հարցում կամ հարցազրույց
18. Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանում								
Համայնքային կյանքում կազմակերպվող միջոցառումներ, որոնց մասնակցել են հաշմանդամություն ունեցող անձիք (որպես ընդհանուր միջոցառումների թվաքանակի տոկոս)	0	0			X		Հաշմանդամություն ունեցող անձիք	Խմբային հարցազրույց/ֆոկլուս խումբ
Համայնքային կյանքում կազմակերպվող միջոցառումներին մասնակցած հաշմանդամություն ունեցող անձանց թվի (որպես հաշմանդամություն ունեցող անձանց տոկոս)	0	0			X		Հաշմանդամություն ունեցող անձիք	Խմբային հարցազրույց/ֆոկլուս խումբ
19. Բարեգործության խթանում								
Բարեգործական նպատակներով հանգանակված գումար հաշվարկված որպես համայնքի սեփական եկամուտների տոկոս	0	0				X	Համայնքապետարան/բարեգործական կազմակերպություն	Հարցում կամ հարցազրույց
Համայնքի կողմից կազմակերպված բարեգործական միջոցառումների քանակ	0	0				X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն